ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՆՆԱ ՀՐԱՆՏԻ

ԼՈԳՈՊԵԴԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

ԺԳ. 00.03 - «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ Գոհար Ռոբերտի Հովյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ՝ Ժաննա Հարությունի Պայլոզյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լիլիթ Հայկարամի Սարատիկյան

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2024 թ. սեպտեմբերի 19-ին, ժամը 12-ին՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ.-ի օգոստոսի 16-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: 2022թ. Հանրակրթության մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին որոշմամբ ամրագրված է, որ ուսումնական հաստատությունը կրթական ծառայությունների մատչելիությունը, որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կրթական գործընթացի մասնակիցներին (սովորող, ծնող, մանկավարժական աշխատողներ և այլն) տրամադրում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ (Հոդված 12, կետ 3, 7-րդ մաս): Այն նախատեսում է անհատական աջակցությանն ուղղված արդյունավետ միջոցների կիրառում այնպիսի միջավայրերում, որոնք ամբողջությամբ կրթական գործընթաց ներգրավելու նպատակին համապատասխան իրականացվում են բարեփոխումներին զուգահեռ և, առավելագույնս, նպաստում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ այդ թվում և խոսքային խանգարումներ ունեցող երեխաների ուսումնական ու սոցիալական զարգացմանը և հասարակության մեջ վերջիններիս ներառմանը («Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին՝ 26.10.2022):

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով՝ «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը» սովորողի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրում է երեք մակարդակում.

1) դպրոցական մակարդակ
2) տարածքային մակարդակ
3) հանրապետական մակարդակ:

Սույն կարգով (13 ապրիլի 2017 թ. հրաման N 370-Ն) կարգավորվում են կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրները («Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին՝ 23.03.2018; 27.03.2019; 26.10.2022; 10.02.2023):

Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր ներառական կրթության քաղաքականության իրականացման նպատակով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության վերոնշյալ օրենքի 17.1 հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ խոսքի, ինչպես և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները ներկայումս կիրառվում են ԱՀԿ կողմից ընդունված՝ երեխաների և երիտասարդների Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության

միջազգային դասակարգման չափորոշիչներին համապատասխան (սովորող, ծնող, մանկավարժական աշխատողներ և այլն)՝ ՖՄԴ-ԵԵ («Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված): Սույն չափանիշները մշակվել են՝ առաջնորդվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով:

Լոգոպեդական գնահատման նոր մոդելը ֆունկցիոնալ հետազոտման տեսանկյունից հնարավորություն կընձեռի ԱՀԿ կողմից ընդունված՝ Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման չափորոշիչներին համապատասխան (ՖՄԴ-ԵԵ) իրականացնել խոսքային խանգարումների գնահատման գործընթացը, իսկ կրթական հաստատություններում իրացնել խոսքային խանգարումներ ունեցող երեխաների խոսքային խնդիրների հաղթահարման գործընթացը՝ օժանդակելով սույն հետազոտության շրջանակներում նոր գիտահետազոտական հիմնախնդիրներ առաջադրելու հնարավորություններին (Ա. Ասլանյան 2023, A. Aslanyan, G. Hovyan Yerevan 2020; A. Aslanyan 2022; 2023):

<u>Հետազոտության նպատակն</u> է մշակել տարածքային կենտրոններում կիրառվող լոգոպեդական գնահատման համակարգային մոդել՝ ըստ ֆունկցիոնալ հետազոտության:

<u>Հետազոտության օբյեկտը</u> լոգոպեդական գնահատման կազմակերպման և անցկացման գործընթացն է՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման տարածքային մակարդակում:

<u>Հետազոտության առարկան</u> լոգոպեդական գնահատման իրականացման միջոցներն ու մեթոդներն են՝ ըստ անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչների և գործիքների:

<u>Հետազոտության գիտական վարկածը</u>: Ենթադրվում է, որ խոսքի գնահատման գործընթացում կիրառվող մոդելը տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում առավել արդյունավետ կարող է կիրառվել, եթե ԱՀԿ կողմից ընդունված՝ Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման չափորոշիչներին համապատասխան (ՖՄԴ-ԵԵ) իրականացվող գնահատման գործընթացը ներառի նաև խոսքային խանգարումների դասակարգման ընդհանուր չափանիշներ, իսկ կրթական հաստատություններում իրականացվող խոսքային խանգարումների հաղթահարման գործընթացը կազմակերպվի ըստ խոսքի գնահատման հստակ և ստույգ ձևակերպված բնութագրիչներ և որակիչներ ներկայացնող առաջադրվող մոդելի:

Նպատակը, օբյեկտը, առարկան և վարկածը որոշել են հետազոտության <u>հիմնական խնդիրները</u>.

1. Ուսումնասիրել խոսքի գնահատման ժամանակակից մոտեցումներն ըստ ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչներն ընդգրկող գնահատման ենթակա ոլորտների, բաղադրիչների և ենթաբաղադրիչների:
2. Ուսումնասիրել և վերլուծել ֆունկցիոնալության գնահատման ծածկագրերը և ֆունկցիոնալության գնահատման որակիչները, ինչպես նաև՝ անձի ֆունկցիոնալության գնահատման մեթոդական ուղեցույցներն՝ ըստ սահմանված որակիչների գնահատման ցուցիչների (ՖՄԴ-ԵԵ, «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներ);
3. Մշակել խոսքի գնահատման համակարգային մոդել և փորձարարական ճանապարհով հիմնավորել լոգոպեդական գնահատման միջոցների և մեթոդների արդյունավետությունը տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում:

<u>Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել</u> հետևյալ հիմնական գիտական սկզբունքներն ու դրույթները, որոնք հաստատվել են ընդհանուր, հատուկ մանկավարժության և լոգոպեդիայի բնագավառում, մասնավորապես՝

- Անձի զարգացման և ձևավորման առաջատար գործունեության մասին տեսությունը (А.Н. Леонтьев, 1977):
- Գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսությունը (П.Я. Гальперин, 1976; М.М. Боген, 1988) [63]:
- Զարգացնող ուսուցման տեսությունը (Д.Б. Эльконин, 1978; В.В. Давыдов, 1966) [91;125;]:
- Փոխհատուցման տեսությունը (Л.С. Выготский, 1983; 2003):
- Խոսքային խանգարումների գնահատման տարբեր մոդելների կիրառման ուղղությամբ տարվող լոգոպեդական աշխատանքների կազմակերպման և անցկացման տեսական պայմաններն ու տեսանկյունները, այս գործընթացում ֆունկցիոնալ գնահատման դերն ու նշանակությունը: «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը» 2017; 2022; 2023):
- «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության վերոնշյալ օրենքի 17.1 հոդվածի 1-ին կետ 2017: ՀՀ կառավարության 28 հուլիսի 2022 թվականի N 1177-Ն որոշում անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչները և գործիքները հաստատելու մասին. Հավելված՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի N 88-Ն հրամանի):

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով կիրառվել են **հետազոտության** հետևյալ **<u>մեթոդները</u>**.

- Հատուկ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծություն:
- Խոսքային խանգարումներ ունեցող երեխաների խոսքի զարգացմամբ զբաղվող մասնագետների, ուսուցիչների, ինչպես նաև ֆունկցիոնալ

գնահատում իրականացնող բժիշկների առաջավոր փորձի ուսումնասիրում և ընդհանրացում:

- Անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչների և գործիքների կիրառման, ինչպես նաև փորձարկվողների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծություն:
- Հետազոտության հոգեբանամանկավարժական և սոցիոլոգիական մեթոդների կիրառում. դիտում, հարցում, զրույց, անկետավորում:
- Անձի ֆունկցիոնալության գնահատման արձանագրությունների, ինքնագնահատման հարցաշարերի, ֆունկցիոնալության գնահատման գործիքակազմի, ամփոփագերի ուսումնասիրություն և վերլուծություն:
- Մանկավարժական (լոգոպեդական գնահատման) ստուգողական փորձարարություններ:
- Փորձարարական մեթոդներ՝ հաստատող, ուսուցանող:
- Մաթեմատիկական վիճակագրական մեթոդ:

<u>Հետազոտության գիտական նորույթը</u>.

- Ուսումնասիրվել և սահմանվել են լոգոպեդական գնահատման արդյունքում դպրոցահասակ երեխայի խոսքային խանգարման հայտնաբերման և, ըստ այդմ, լոգոպեդական ծառայությունների մատուցման առանձնահատկությունները, ինչպես նաև՝ անձի ֆունկցիոնալության գնահատման նախադրյալները մշակված մոդելի միջոցներով
- սահմանվել է լոգոպեդական գնահատման մոդելավորման նպատակով կիրառվող մեթոդական ուղեցույցի հիմանական բովանդակությունը, ուղղվածությունը, բնույթը խոսքի գնահատման գործընթացում
- բացահայտվել է լոգոպեդական գնահատման նպատակով կիրառվող ֆունկցիոնալության գնահատման որակիչների, ինչպես նաև՝ ըստ սահմանված որակիչների խոսքի գնահատման մեթոդական ուղեցույցների՝ գնահատման ցուցիչների վերաբերյալ երեխաների խոսքի զարգացմամբ զբաղվող մասնագետների, ուսուցիչների, ինչպես նաև՝ ֆունկցիոնալ գնահատում իրականացնող մասնագետների տեղեկացվածության մակարդակը,
- մշակվել է խոսքի գնահատման համակարգային մոդել՝ կրթական հաստատություններում իրականացվող խոսքի գնահատման հստակ և ստույգ ձևակերպված բնութագրիչների և որակիչների ներկայացմամբ:

<u>Հետազոտության տեսական նշանակությունը</u> լոգոպեդների, ֆունկցիոնալ գնահատում իրականացնող, ինչպես նաև խոսքային խանգարումներ ունեցող երեխաների խոսքի գնահատմամբ և զարգացմամբ զբաղվող հարբժշկական մասնագետների համար առաջարկվող մոտեցումների արդյունավետության, ինչպես նաև հետազոտության ստացված արդյունքների տեսական հիմնավորումն է, խոսքային խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցական և խոսքի զարգացման համար անհրաժեշտ տեսական

դրույթների զարգացման հիմնական միտումների և նրանց ցուցաբերվող մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնումը՝ անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչների և գործիքների կիրառման ուսումնասիրմամբ և տեսական վերլուծությամբ:

<u>Հետազոտության գործնական նշանակությունը</u> տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում իրականացվող լոգոպեդական գնահատման աշխատանքների բովանդակության, մեթոդների և պայմանների գործնական մշակումն ու դրանց ներդրումն է մանկավարժական գործընթացում՝ ըստ ՖՄԴ բաղադրիչ ոլորտների և համապատասխան ծածկագրերն արտացոլող տեղեկատվական շտեմարանի կիրառման, ինչը հնարավորություն է տալիս առավել ճգրիտ և համեմատելի վիճակագրական տվյալներ ունենալ խոսքային խանգարում ունեցող երեխայի ուսումնական կարողությունների առկա մակարդակը գնահատելու և խոսքի զարգացման հնարավորություններն ուսումնասիրելու համար: Մշակված մոդելը խոսքային խանգարումների գնահատման տեսանկյունից շեշտադրում է լոգոպեդական ծառայությունների մատուցման անհրաժեշտությունն ըստ ՖՄԴ բաղադրիչ ոլորտների և համապատասխան ծածկագրերն արտացոլող տեղեկատվական շտեմարանի կիրառման, ինչը հնարավորություն է ընձեռում առավել ճգրիտ և համեմատելի վիճակագրական տվյալներ ունենալ խոսքային խանգարում ունեցող երեխայի ուսումնական կարողությունների առկա մակարդակը գնահատելու և խոսքի զարգացման հնարավորություններն ուսումնասիրելու համար, կատարել կարիքի վերհանում:

<u>Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթներն են</u>.

1. Խոսքի գնահատման, երեխայի խոսքային կարողությունների հետազոտումը լոգոպեդական աշխատանքի կազմակերպման կարևորագույն նախապայմանն է և այս գործընթացի ճիշտ կազմակերպումից է կախված լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը:
2. Ֆունկցիայի խանգարումների վրա հիմնված դասակարգումը լոգոպեդական ծառայությունների տրամադրման տեսակի, ժամանակահատվածի, տևողության և ծավալների որոշման համար հաճախ բավարար չէ գնահատման տեսանկյունից, որի համար էլ կարևորվում է ոչ միայն ֆունկցիայի գնահատման բժշկական գործընթացը, այլ նաև ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվող նեղ մասնագիտական միջամտությունը, որը և նախևառաջ ենթադրում է լոգոպեդական գնահատում:
3. Երեխայի խոսքային խնդիրների հետ կապված հարցերի, խոսքային խանգարման տեսակի և աստիճանի որոշման առաջնահերթությունը պետք է տրվի լոգոպեդի և ՏՄԱԿ-ի մասնագետի կողմից իրականացված գնահատմանը, որով էլ հիմնավորվում է լոգոպեդական գնահատման

մոդելավորումը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորումը ապահովված է հետազոտվողների բավարար քանակակազմով, անցկացված աշխատանքի ծավալով, հետազոտության ժամանակակից և համապատասխան մեթոդների կիրառմամբ, փաստացի փորձարարական նյութի մանրազնին վիճակագրական մշակմամբ:

Հետազոտության փորձաքննությունն ու ներդրումը: Ատենախոսության առանձին դրույթներ, արդյունքներ և հետևություններ զեկուցվել են Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի նիստերում /2020-2023թթ./: Հետազոտությունն անց է կացվել 2020-2023 թվականներին՝ Երևանի թիվ 1; 2; 3; 4 ՏՄԱԿ-ներում, Վանաձոր և Գորիս քաղաքների ՏՄԱԿ-ներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 144 էջ համակարգչային տեքստով, կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը պարունակում է 9 աղյուսակ, 12 տրամագիր, 2 նկար, 2 գծապատկեր և 2 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածականում հիմնավորված է թեմայի արդիականությունը, բացահայտված է հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության նպատակը, գիտական վարկածը, նպատակից և գիտական վարկածից բխող հետազոտության խնդիրները, առարկան, օբյեկտը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը:

Ատենախոսության **«Հիմնախնդրի դրվածքը ժամանակակից լոգոպեդիայում»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին գլխի՝ «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը որպես սովորողի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման հիմք» խորագրով առաջին ենթագլխում լուսաբանված են լոգոպեդական հետազոտության առանձնահատկությունները խոսքային խանգարման տեսակի և աշխատանքի որոշման գործընթացում (ՀՀ կառավարության որոշումներ 2013; 2017; 2022; 2023: «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության վերոնշյալ օրենքի 17.1 հոդվածի 1-ին կետ 2017, ՀՀ կառավարության 28 հուլիսի 2022 թվականի N 1177-Ն որոշում անձի

ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչները և գործիքները հաստատելու մասին. Հավելված՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի N 88-Ն հրամանի):

«**Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման չափորոշիչների կիրառման ուսումնասիրությունը գնահատման գործընթացում**» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված է հիմնախնդրի դրվածքը՝ հայկական լոգպեդիայում վերջին տասնամյակում լոգոպեդական աշխատանքի կազմակերպման հարցերը լուսաբանող հետազոտությունների վերլուծությամբ, ինչպես նաև՝ լոգոպեդական գործընթացում կիրառվող համապատասխան մեթոդական պահանջների, միջոցների, ինարների գիտական ուղղվածության, խոսքային կարիքի գնահատման, շտկման, խորհրդատվական աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությամբ:

«**Խոսքային խանգարումներ ունեցող սովորողների կրթության կազմակերպման առանձնահատկությունները լոգոպեդական գնահատման և աջակցության համատեքստում**» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված է ՀՀ-ում այսօր սահմանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերլուծությունները, որոնք հռչակված են նաև «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայում և մարդու իրավունքներին վերաբերող այլ համաձայնագրերում:

«**Հիմնախնդրի դրվածքը լոգոպեդական գնահատման և ծառայությունների տրամադրման գործընթացում**» խորագրով չորրորդ ենթագլխում, հիմնախնդրի սահմանման շրջանակներում, հիմնավորված է լոգոպեդական գնահատման առանձնահատկությունների վեր հանումն ու անհրաժեշտությունը խոսքային խանգարման տեսակի և աստիճանի որոշման չափանիշներին համապատասխան: Խնդրո առարկայի վերաբերյալ իրականացված վերլուծություններն այս ենթագլխում թույլ են տալիս պարզել, թե ինչպես է ընթանում լոգոպեդական գնահատումը, ինչ չափորոշիչների հիման վրա են գնահատում և ինչպես են որոշում խոսքային խանգարման տեսակը և աստիճանը ՀՀ ՏՄՀԱԿ-երում (Մ.Հարությունյան, Գ.Հովյան, Լ. Սարատիկյան 2019; Ա.Ասլանյան, Գ.Գրիգորյան, Գ.Հովյան 2022; A. Aslanyan, G. Hovyan Yerevan 2020; A. Aslanyan 2022; 2023):

«Լոգոպեդական ծառայությունների իրականացման և խոսքային խանգարումների գնահատման ուղղությամբ կազմակերպվող հետազոտությունը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում» խորագրով ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Հետազոտության կազմակերպումը, խնդիրները, մեթոդները և աշխատանքի փուլերը» խորագրով առաջին ենթագլխում ներկայացված է դիտարկվող հիմնախնդրի՝ լոգոպեդական գնահատման մոդելավորման աշխատանքների դրվածքը ուսումնական տարբեր հաստատություններում,

հետազոտության առջև դրված խնդիրների լուծման համար կիրառված հետազոտության տեսական և փորձարարական մեթոդները: Հետազոտությունն ներկայացված է մի շարք փոխկապակցված փուլերով:

Հաստատող գիտափորձով որոշված է խոսքային խանգարման գնահատման միասնական մոտեցման և ըստ այդմ՝ մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման համար կազմվող համապատասխան եզրակացության անհրաժեշտությունը:

«Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների և հանրակրթական դպրոցների ուսուցիչների տեղեկացվածության ուսումնասիրությունը լոգոպեդական գնահատման և ծառայությունների մատուցման գործընթացում» խորագրով երկրորդ ենթագլուխը ներառում է ՏՄԱԿ-ներում իրականացված դիտումները և գնահատումները, որոնք հնարավորություն են ստեղծում փաստել, որ տեսական և գործնական կիրառելիության առումով կրտսեր դպրոցահասակ երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքների արդունավետությունը մեծամասամբ կախված է լոգոպեդական գնահատման և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշների կիրառման գործընթացից:

«Խոսքային խանգարումներ ունեցող երեխաների լոգոպեդական գնահատման և հոգեբանամանկավարժական աշխատանքների իրականացման դրվածքի վերլուծությունը» խորագրով երրորդ ենթագլուխը ամբողջովին վերաբերում է ՏՄԱԿ-ներում իրականացված բազմաձավալ հետազոտությանը, մանկավարժական դիտումներին և լոգոպեդական գնահատումներին: 2020-2021 թվականների ընթացքում ուսումնասիրվել են խոսքային խանգարումներ ունեցող 360 դպրոցականների հետ իրականացվող լոգոպեդական գնահատման առանձնահատկությունները: Հետաքրքիր է նշել, որ լոգոպեդական գնահատման գործընթացում մասնագետները մեծամասամբ չեն կարևորում խոսքային խանգարման առանձնահատկությունները և էական տարբերություն չէին տեսնում լոգոպեդական ծառայությունների մատուցման և գնահատման արդյունավետության բարձրացման մանկավարժական մոտեցումների ընտրության մեջ (տրամագիր 1): Նկարից երևում է, որ խոսքային խանգարումների շտկմամբ զբաղված մասնագետների 41%-ը, դպրոցների ուսուցիչների և ՄՀ աջակցության թիմի անդամների 6%-ը և ՏՄԱԿ-ների մասնագետների 36%-ը համեմատաբար լավ էին տեղեկացված այս հարցի վերաբերյալ: Հարցման տվյալները թույլ են տալիս փաստել, որ եթե մասնագետների 46%-ը, 57% և 56%-ը դժվարանում էր այս խնդրի լուծման մեջ, ապա դպրոցների ուսուցիչների, ՄՀ աջակցության թիմի անդամների և ՏՄԱԿ-ների մասնագետների 13%-ը, 37%-ը և 8%-ը կարողանում էր որոշակի մոտեցումներ առաջարկել լոգոպեդական գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացման համար:



Տրամագիր 1. Լոգոպեդական աշխատանքի արդյունավետության բարձրացման մանկավարժական մոտեցումների ուսումնասիրությունը

Ատենախոսության՝ **«Լոգոպեդական գնահատման մոդելավորումը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում»** խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

«Լոգոպեդական գնահատման գործընթացի բովանդակությունը» խորագրով առաջին ենթագլխում շարադրված է լոգոպեդական գնահատման մոդելավորումը, երեխայի խոսքային խնդիրների հետ կապված հարցերի, խոսքային խանգարման տեսակի և աստիճանի որոշման առաջնահերթությունը, որը պետք է տրվի լոգոպեդի՝ նաև ՏՄԱԿ-ի մասնագետի կողմից իրականացված գնահատման արդյունքում: Հետազոտության այս փուլում իրականացված մանկավարժական ստուգողական փորձերը թույլ տվեցին գնահատել խոսքային խանգարումների գնահատման առանձնահատկություններն ըստ համապատասխան բնութագրիչների և որակիչների:

«**Խոսքի ֆունկցիոնալ գնահատման առանձնահատկությունների, ընթացքի և անցկացված հետազոտության արդյունքների մեթոդական վերլուծություն**» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են լոգոպեդական գնահատման նպատակով անցկացված հաստատող գիտափորձերը և միամյա ուսուցանող մանկավարժական գիտափորձը: Խոսքային խանգարումներ ունեցող սովորողների հետ իրականացվող լոգոպեդական գնահատման աշխատանքների վերլուծությունը ՏՄԱԿ-ներում թույլ տվեց որոշել մեր կողմից առաջադրվող լոգոպեդական գնահատման մոդելի արդյունավետությունը՝ ընտրված համապատասխան մեթոդների և միջոցների կիրառմամբ:

«**Լոգոպեդական գնահատման մոդելավորումը որպես սովորողների զարգացման և լոգոպեդական աշխատանքում լիարժեք ներգրավվելու միջոց**»

խորագրով երրորդ ենթագլխում, լոգոպեդի աշխատանքի իրականացման ուսումնասիրման նպատակով, ներկայացված են սովորողների խոսքի զարգացման օրինաչափությունների, լոգոպեդական խորհրդատվության իրականացման ուսումնասիրությունները, զրույցները և դիտարկումները:



Տրամագիր 2. Խոսքային խանգարում ունեցող երեխաների գնահատման, լոգոպեդական աշխատանքի կազմակերպման և կրթական կարիքների հաղթահարման գործընթացում առկա խնդիրների գնահատումը

Հարցված մասնագետների մեծամասնությունը՝ (58%), խոսքային խանգարում ունեցող երեխաներին դպրոցում մասնագիտական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ հարցին պատասխանելիս նշել է թիմային աշխատանքի արդյունավետության մասին՝ այդ շրջանակներում առանձնացնելով հոգեբանամանկավարժական աշխատանքները: Նշենք, որ հարցված մասնագետների մյուս մասը՝ (24%), չի առանձնացրել կոնկրետ բնույթի որևէ աշխատանք, այլ ընդամենը մատնանշել է ներառական կրթության կազմակերպման շրջանակներում իրենց կողմից մատուցվող ծառայությունների մասին, որոնք հանրակրթական ծրագրի շրջանակներում հիմնականում ուղղված են եղել աջակցելու ԿԱՊԿ ունեցող երեխաների՝ դասապրոցեսին մասնակցելուն:

«**Լոգոպեդական ծառայությունների իրականացման և խոսքային խանգարումների գնահատման արդյունավետությունը Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում**» խորագրով չորրորդ ենթագլխում ներկայացված են 1-4-րդ դասարաններում՝ խոսքային խանգարումներ ունեցող սովորողների խոսքային խնդրի գնահատման սահմանված միջոցներն ու մեթոդները, բացահայտելով և հիմնավորելով խոսքային խնդիրների առանձնահատկությունները: Ատենախոսության այս գլխում ներկայացված են նաև մեր կողմից անցկացված մանկավարժական գիտափորձի արդյունքների վերլուծությունն ու ընթացքը:



Տրամագիր 3. Միամյա մանկավարժական գիտափորձի ամփոփիչ արդյունքների վերլուծությունը ստուգողական և փորձարարական խմբերում

Մշակվել և հիմնավորվել է լոգոպեդական գնահատման համալիր մեթոդական համակարգ, որն ուղղված է տարրական դպրոցում սովորողների խոսքի՝ հնարավորինս անսխալ գնահատման իրականացմանը: Ատենախոսության այս գլուխն ամփոփ ներկայացնում է լոգոպեդական գնահատման միջոցների, մեթոդական մոտեցումների մշակումը և դրանց ներդրումը տարածքային մակարդակում:

Լոգոպեդական արդյունավետ աշխատանքի իրականացման նպատակով անցկացված հաստատող գիտափորձերը, միամյա ուսուցանող մանկավարժական գիտափորձը, իրականացված լոգոպեդական գնահատման աշխատանքների վերլուծությունը թույլ տվեցին որոշել դրանց արդյունավետությունը՝ ընտրված համապատասխան մեթոդների և միջոցների կիրառմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտամեթոդական գրականության վերլուծությունը, ՏՄԱԿ-ներում իրականացված լոգոպեդական գնահատման աշխատանքների արդյունավետության բարձրացման մանկավարժական դիտումները և լոգոպեդական գնահատման բուն գործընթացի ուսումնասիրությունը, հանրակրթությունում աշխատող լոգոպեդների գործնական փորձը, ինչպես նաև մեր կողմից իրականացված բազմաձավալ հետազոտությունները և միամյա մանկավարժական գիտափորձը թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունն՝ իր հետևություններով.

1. Ներառական կրթության համակարգում մանկավարժահոգեբանական ծառայությունների ներդրման, մասնավորապես, լոգոպեդական գնահատման և ծառայության կազմակերպման պարագայում հնարավոր է արձանագրել դրական փոփոխություններ սովորողների՝ կրթական

գործունեության կազմակերպման արդյունավետությունն ու ինքնուրույն մասնակցությունն ապահովելու առումով:

2. Արդեն իսկ ակնհայտ է, որ յուրաքանչյուր մասնագիտական միջամտություն ունի իր յուրօրինակ դերը և նշանակությունը երեխայի կրթական գործընթացի բնականոն ընթացքն ապահովելու համար: Համապատասխանաբար, լոգոպեդական գնահատումը հնարավորություն է ստեղծում արդյունավետ կազմակերպելու խոսքի զարգացման, շտկման աշխատանքը, ինչն էլ թույլ է տալիս նվազեցնել ԿԱՊԿ ունեցող սովորողների ֆիզիկական, մտավոր սահմանափակումների, միջավայրային ոչ նպաստավոր պայմանների արդյունքում ի հայտ եկած այն խոչընդոտները, որոնք ազդեցություն են ունեցել կրթական գործընթացում երեխայի բնականոն մասնակցության ապահովման վրա:
3. ՏՄԱԿ-ների լոգոպեդների կողմից իրականացվող գործունեությունը հանրակրթությունում հնարավորություն է ստեղծում գնահատելու խոսքային խանգարումն ու որոշելու լոգոպեդական աջակցության բոլոր հնարավոր միջոցները և եղանակները՝ հնարավորինս ընդլայնելով խոսքային խանգարումներ ունեցող սովորողների ինքնուրույն և ազատ մասնակցությունն ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ՝ հասարակական կյանքում:
4. Համադրելով լոգոպեդական գնահատման համար հիմք հանդիսացող ՖՄԴ առաջարկվող մոդելը արդի լոգոպեդիայում հաստատված խոսքային խանգարումների դասակարգման օրինաչափություններին, կարելի է համագործակցային և աջակցող աշխատանքների իրականացման արդյունքում արձանագրել դրական փոփոխություններ՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթական գործընթացում:
5. Լոգոպեդական գնահատման և ըստ այդմ կազմակերպված լոգոպեդական աշխատանքի իրականացման շրջանակներում, համագործակցություն հաստատելով մանկավարժահոգեբանական աջակցություն ցուցաբերող թիմի անդամների հետ, հնարավոր է գնահատել ԿԱՊԿ ունեցող սովորողի կրթական կարիքն՝ իր իսկ մասնագիտական տեսանկյունից, միաժամանակ, կարևորելով նրա առողջապահական և սոցիալական այն կարիքները, որոնք որոշակի ազդեցություն ունեն կրթության վրա:
6. Համակարգելով կրտսեր դպրոցահասակների խոսքային խնդրի գնահատման սահմանված միջոցներն ու մեթոդները, բացահայտելով և հիմնավորելով մեր կողմից մշակված գնահատման մեթոդական համակարգը և խոսքի գնահատման առանձնահատկություններն ըստ ՖՄԴ մոդելի՝ գնահատման նոր կարգին համապատասխան կարելի է իրականացնել արդյունավետ լոգոպեդական աշխատանքը հանրակրթությունում:

7. Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում իրականացվող լոգոպեդական գնահատման աշխատանքների բովանդակության, մանկավարժական պայմանների գործնական մշակումն ու դրանց ներդրումն ըստ ՖՄԴ բաղադրիչ ոլորտների և համապատասխան ծածկագրերն արտացոլող տեղեկատվական շտեմարանի կիրառման, հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ և համեմատելի վիճակագրական տվյալներ ունենալ խոսքային խանգարում ունեցող երեխայի ուսումնական կարողությունների առկա մակարդակը գնահատելու համար:
8. Առաջարկվող ֆունկցիոնալ գնահատման սահմանված որակիչների և ստույգ ձևակերպված բնութագրիչների կիրառմամբ իրականացվող խոսքի գնահատման գործընթացը հնարավորություն է ընձեռում ճիշտ կազմակերպել լոգոպեդական ծառայությունը ՏՄԱԿ-ում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. Ասլանյան Ա.Հ., Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը որպես սովորողի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման հիմք, «ИНТЕРНАУКА» Научный журнал №4(227) февраль 2022 г., Москва, Изд. «Интернаука»., Стр. 166-176
2. Ասլանյան Ա.Հ., Խոսքային խանգարումներ ունեցող սովորողների կրթության կազմակերպման առանձնահատկությունները լոգոպեդական գնահատման և աջակցության համատեքստում, «ИНТЕРНАУКА» Научный журнал №4(227) февраль 2022 г., Москва, Изд. «Интернаука», Стр. 9-13
3. Ասլանյան Ա.Հ., Ֆունկցիոնալության հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման չափորոշիչների կիրառման ուսումնասիրությունը գնահատման գործընթացում, Российско-Армянский Университет, Шестнадцатая Годичная Научная Конференция, Сборник статей Ереван - 2023, 5-9 դեկտեմբերի 2022թ., Հոդվածների ժողովածու նվիրված ՀՌՀ-ի հիմնադրման 25-ամյակին, Երևան 2023: Стр. 364-373
4. Асланян А.Г., Овян Г.Р., Григорян Г.Ф., Содержание коррекционной работы логопеда в детском саду. «Современное образование: актуальные вопросы, достижения и инновации» 25 мая 2019 г., Пенза РФ. Стр. 125-129
5. Асланян А.Г., Овян Г.Р., Григорян Г.Ф., Факторы диагностики дислексии. «Современное образование: актуальные вопросы, достижения и инновации» 25 мая 2019 г., Пенза РФ. Стр. 263-267
6. Асланян А.Г., Классификация по функциональным нарушениям как основание для оказания логопедических услуг, Научный журнал РИНЦ, «Обществознание

и социальная психология». Выпуск №5-2 (49) 2023. Scientific journal «KPO-SCIENCE» Issue №12-2 (42) 2023. Главный редактор: Шелистов Н.А. Редакция «Обществознание и социальная психология Editor-in-chief: Shelistov N.A. The editors of «Kpo-science.ru» CT. 1091 Сайт научного журнала: www.kpo-science.ru website of the scientific journal: www.kpo-science.ru. Стр. 6-9

7. Aslanyan A.H., Hovyan G.R., Modeling of Speech Therapy Assessment Regional Pedagogical and Psychological Support Centers. Armenian Journal of Special Education, Scientific Methodological Journal, Second Issue of the first Volume, Yerevan, 2020. P. 6-19
8. Aslanyan A.H., Classification Based on Dysfunction as A Basis for Providing Speech Therapy Services. Armenian Journal of Special Education Scientific Methodological Journal, Volume 3 Issue 1, Yerevan, 2021. P. 14-25
9. Aslanyan A.H., Peculiarities Of Organizing The Education Of Children With Speech Disorders From The Perspective Of Speech Therapy Assessment And Intervention. Armenian Journal of Special Education Scientific Methodological Journal, Volume 4 Issue 1, Yerevan, 2021. P. 17-20
10. Aslanyan A.H., The Implementation of Speech Therapy Services and Speech Disorders Assessment in Regional Psycho-Pedagogical Support Centers. ARMENIAN JOURNAL OF SPECIAL EDUCATION Scientific Methodological Journal volume 7 N 1, Yerevan 2023. P.6-15

АСЛАНЯН АННА ГРАНТОВНА
МОДЕЛИРОВАНИЕ ЛОГОПЕДИЧЕСКОЙ ДИАГНОСТИКИ В ОБЛАСТНЫХ ЦЕНТРАХ ПЕДАГОГИКО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ПОДДЕРЖКИ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.03.- “Специальная педагогика” (Логопедия)

Защита диссертации состоится **19 сентября 2024 г., в 12:00** на заседании специализированного совета 020 КВОН „Педагогика„ по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: Для определения вопросов, связанных с речевыми проблемами ребенка, для определения вида и степени речевого нарушения, приоритетным должно быть диагностика, проводимая логопедом, что обосновывает актуальность предлагаемой диссертации на тему «Моделирование логопедической диагностики в областных центрах педагогико-психологической поддержки». Обследование речевых нарушений является важнейшей предпосылкой организации логопедической работы, и от правильной организации этого процесса зависит эффективность логопедической работы [2].

Существующие научные исследования, направленные на организацию речевого исследования по особенностям функциональной диагностики, не вполне достаточны для диагностики речевых нарушений, а затем, на основании этого диагноза (диагностики) для организации логопедической работы необходимы многоуровневые и масштабные исследования.

Для решения проблемы мы считаем необходимым, прежде всего, проанализировать действующую систему организации образования детей с особыми образовательными потребностями и применить критерии педагогико-психологической диагностики необходимости особых условий обучения ребенка с более точной формулировкой и уточнением особенностей и определителей указанных проблем, предложив новую модель логопедической диагностики.

Цель исследования – разработать системную модель логопедической диагностики, применяемую в областных центрах по данным функционального исследования.

Задачи исследования:

1. Изучить степень разработанности исследуемой проблемы, современные подходы в научно-методической литературе и в условиях раннего логопедического вмешательства.
2. Изучить и проанализировать особенности раннего логопедического вмешательства, реализуемого с детьми с РАС, формирования и организации средств общения, что будет способствовать развитию их возможностей социального общения в условиях применения соответствующей модели.
3. Разработать системную модель, направленную на формирование и развитие речи детей с РАС, предложить педагогические условия раннего логопедического вмешательства и экспериментально обосновать эффективность предложенных подходов.

Научная новизна исследования: В результате логопедической диагностики изучены и определены результаты логопедической диагностики выявления речевого нарушения ребёнка школьного возраста и, соответственно, особенности логопедических услуг, а также функциональные предпосылки диагностики развития личности с помощью разработанных моделей.

- Определено основное содержание, направленность, характер методического пособия, применяемого с целью моделирования логопедической диагностики в процессе речевой экспертизы.
- Выявлен уровень информированности специалистов, педагогов, специалистов по функциональной диагностике относительно показателей диагностики методических указаний по диагностике речи, квалификаторов логопедической диагностики, используемых с целью логопедической диагностики.
- Выявлен уровень информированности специалистов, педагогов, специалистов по функциональной диагностике, занимающихся развитием речи детей, а также согласно установленным методическим указаниям по речевой диагностике, относительно квалификаторов и показателей диагностики функциональных возможностей, используемых с целью логопедической диагностики.
- Разработана системная модель диагностики речи с представлением четко и точно сформулированных характеристик и классификаторов диагностики речи, проводимой в образовательных учреждениях.

Теоретическая значимость исследования заключается в эффективности предложенных подходов для логопедов, проводящих функциональную диагностику, а также сопутствующих медицинских специалистов, занимающихся речевой диагностикой и развитием детей с речевыми нарушениями, а также в теоретической обоснованности результатов исследования, расширение основных направлений разработки теоретических положений, необходимых для общения и речевого развития детей с речевыми нарушениями и оказания им педагогических и психологических услуг, путем изучения и теоретического анализа использования критериев и инструментов диагностики функциональные возможности человека.

Практическая значимость исследования определяется в практической разработке содержания, методов и условий логопедических диагностических работ, проводимых в областных центрах педагогической и психологической поддержки, и их внедрении в педагогический процесс, по компонентам МКФ и применению базы данных, отражающей соответствующие коды, что позволяет иметь более точные и сопоставимые статистические данные для диагностики текущего уровня обучаемости ребенка с нарушением речи и изучения возможностей речевого развития.

В результате проведенного исследования предложены методические инструкции и указания по использованию определенных функциональных диагностических квалификаторов и четко сформулированных характеристик, обобщающих модель речевой диагностической системы, используемой с целью логопедической диагностики.

Разработанная модель с точки зрения диагностикики речевых нарушений подчеркивает необходимость оказания логопедических услуг по компонентным направлениям МКФ и использования информационной базы данных, отражающей соответствующие коды, что позволяет иметь более точные и сопоставимые статистические данные, исследовать современный уровень образовательных способностей ребенка с нарушением речи и изучить возможности речевого развития.

Достоверность и обоснованность результатов исследований обеспечивается достаточным количеством объектов исследования, объемом проводимых работ, использованием современных и актуальных методов исследования, тщательной статистической обработкой фактического экспериментального материала.

Научный опыт и внедрение. Отдельные положения, результаты и выводы диссертации были доложены на заседаниях кафедры логопедии и реабилитационной терапии АГПУ имени Х. Абовяна (2020–2023гг.). Исследование проводилось в 2020–2023 годах в №1, 2, 3, 4 в областных центрах педагогической и психологической поддержки г. Ереван, в областных центрах педагогической и психологической поддержки городов Ванадзор и Горис.

Структура и объем диссертации. Диссертация состоит из 144 страниц компьютерного текста, состоит из Введения, трех Глав, Заключения, списка использованной литературы и приложения. Текст диссертации содержит 9 таблиц, 12 схем, 2 рисунков, 2 диаграмм и 2 приложения.

ASLANYAN ANNA HRANT

MODELING OF SPEECH THERAPY ASSESSMENT IN REGIONAL CENTERS OF PEDAGOGICAL AND PSYCHOLOGICAL SUPPORT

Thesis submitted for the degree of candidate of Pedagogical Sciences, Specialty Area: 13.00.03 – "Special pedagogy" (Speech therapy).

The defense of the dissertation will take place **on September 19th, 2024, at 12:00** at the meeting of the specialized pedagogical committe ,,Pedagogy,, 020 HESC RA for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (address: Tigran Mets avenue 17, 0010, Yerevan, Armenia).

SUMMARY

The relevance of the research: To determine issues related to a child's speech problems, as well as to ascertain the type and degree of speech impairment, the priority should be an assessment conducted by a speech therapist. This necessity justifies the relevance of the proposed dissertation on the topic "Modeling speech therapy assessment in regional centers of pedagogical and psychological support." Examination of speech disorders stands as the most crucial prerequisite for organizing speech therapy work, and the effectiveness of such therapy relies heavily on the correct organization of this process.[2]

The existing scientific research aimed at organizing speech assessment according to the features of functional assessment is not entirely sufficient for diagnosing speech disorders. Therefore, further multi-level and large-scale studies are needed to organize speech therapy work based on this diagnosis.

In order to refer to the problem, we believe it is necessary, first and foremost, to analyze the current system of organizing education for children with special educational needs. This entails applying criteria for pedagogical and psychological assessment to determine the specific requirements for a child's education under special conditions, with a more precise formulation and clarification of the features and determinants of these problems. Consequently, we propose a new model of speech therapy assessment.

The aim of the research is to develop a systemic model of speech therapy assessment used in regional centers based on functional research data.

The objectives of the research are:

1. To assess the current level of development of the subject matter under study, modern approaches in the scientific and methodological literature and in the conditions of early speech therapy intervention.
2. To study and analyze the features of early speech therapy intervention implemented with children with ASD, the formation and organization of means of communication, which will contribute to the development of their social communication capabilities in terms of implementing the appropriate model.
3. To devise a systematic model aimed at the formation and development of speech in children with ASD, propose pedagogical conditions for early speech therapy intervention and experimentally substantiate the effectiveness of the proposed approaches.

Scientific novelty of the research:

As a result of a speech therapy assessment, the results of a speech therapy assessment for

identifying a speech disorder in a school-age child and, accordingly, the features of speech therapy services, as well as the functional prerequisites for assessing personality development using devised models, were studied and determined.

- The main content, focus, and nature of the methodological manual used for the purpose of modeling speech therapy assessment in the process of speech examination have been determined.
- The level of awareness of specialists, teachers, functional assessment specialists regarding the assessment indicators of guidelines for speech assessment, speech therapy assessment qualifiers used for the purpose of speech therapy assessment has been revealed.
- The level of awareness of specialists, teachers, functional assessment specialists involved in the development of children's speech, as well as in accordance with established guidelines for speech assessment, was revealed regarding qualifiers and indicators for assessing functional capabilities used for the purpose of speech therapy assessment.
- A systematic model for speech assessment has been developed, presenting clearly and precisely formulated characteristics and classifiers for speech assessment carried out in educational institutions.

Theoretical significance of the research: Lies in evaluating the effectiveness of proposed approaches for speech therapists and related medical specialists in assessing and developing communication skills in children with speech disorders. Additionally, it contributes to the expansion of theoretical knowledge necessary for aiding these children through the analysis of criteria and tools used to assess their functional capabilities.

Practical significance of the research: Lies in enhancing the content, methods, and conditions of speech therapy assessments conducted in regional centers of pedagogical and psychological support. By implementing these findings into the educational process, based on the components of the ICF and utilizing a database with corresponding codes, more accurate and comparable statistical data can be obtained. This aids in assessing the current learning level of children with speech disorders and exploring possibilities for speech development.

As a result of the study, methodological instructions and guidelines were proposed for the implementation of certain functional assessment qualifiers and clearly formulated characteristics that generalize the model of the speech assessment system used for the purpose of speech therapy assessment.

The developed model, from the point of view of assessing speech disorders, emphasizes the need to provide speech therapy services in the component areas of the ICF and the use of an information database reflecting the corresponding codes, which makes it possible to have more accurate and comparable statistical data, assess the current level of educational abilities of a child with speech disorders and study the possibilities of speech development.

The reliability and validity of the research results are upheld through several means, including a sufficient number of research subjects, comprehensive work conducted, the use of modern and relevant research methods, and careful statistical processing of actual experimental material.

Scientific findings and practical implementation: Specific findings, results, and conclusions from the dissertation were presented at meetings held by the Department of Speech Therapy and Rehabilitation Therapy at the ASPU after Kh. Abovyan between 2020 and 2023. The study itself was conducted from 2020 to 2023 across various regional centers

of pedagogical and psychological support, including locations in Yerevan, as well as in the cities of Vanadzor and Goris.

The structure and volume of the research: The dissertation consists of 144 pages, consisting of an Introduction, three Chapters, a Conclusion, a list of references and an appendix. The text of the dissertation contains 9 tables, 12 schemes, 2 figures, 2 diagrams and 2 appendices